12.04.2021թ. կնքված **ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-12-03** պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոց նախատեսելու վերաբերյալ

**համաձայնագիր № 1**

ք. Երևան

26 ապրիլի 2021թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Մեդիսար» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Մ.Գաբրիելյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-12-03» պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով 8.13 կետով սահմանված միջոցների հատկացումը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**Համաձայնագրի առարկան**

1. Հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագիրը հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին 2021թ. ապրիլի 12-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-12-03» պայմանագրի մասով հաստատել վճարման ժամանակացույց ըստ սույն համաձայնագրի հավելված № 1-ի, որի միջոցով հատկացվում են համապատասխան ֆինանսական միջոցներ վճարման ժամանակացույցով նշված ապրանքների ձեռք բերման համար:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-12-03» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից. 1-ին էջը՝ սույն համաձայնագիր № 1-ն է, իսկ 2-րդը՝ սույն համաձայնագրի հավելված № 1-ն է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ | «Մեդիսար» ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12 | Հասցե՝ ք. Երևան, Գետառի 4/9 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900018004649 | Հ/Հ 2050022415811001 |
| ՀՎՀՀ 02625503 | ՀՎՀՀ 02555635 |
| Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Վանյան | Տնօրեն՝ Մ.Գաբրիելյան |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված N 1
26/04/ 2021թ. կնքված
№ 1 Համաձայնագրի

Հավելված N 2
12 ապրիլի 2021թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-12-03» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ այդ թվում | | | |
| | | | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը |
| 26 | 44611310 | Փաթեթներ/պարկեր լաբորատորիաների կենսաբանական թափոնների փաթեթավորման և ավտոկլավացման համար_մեծ | 1,275,000.00 | 1,275,000.00 | 1,275,000.00 | 1,275,000.00 |

ԳՆՈՐԴ
ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900018004649
ՀՎՀՀ 02625503
Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Վանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդիսար» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Գետառի 4/9
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ 02555635
Տնօրեն՝ Մ.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.